

Դիոնեսիոսի Արիսպագացոյ առաջին եպիսկոպոսին Արենացոց ֆա-
ղափին, զոր գրեաց նա պատասխանի քղոյն Տիսուսի եպիսկոպոսին
Կրեսացոց, յաղագս նկնջնան Սրբոյ Աստուածածնին եւ կուսին խո-
րագրով. այս գրուածքը թանկագին յիշատակարան մ'է, որ կը
զտնուի միայն հայ մատենադրութեան մէջ և կատարելագէտ կը
հաստատէ Երուսաղէմի աւանդութիւնը: Այս յիշատակարանը
հիմը եղած է Մովսէս Խորենացիին անուամբ մեզ հասած «Պա-
տասխանի թղթոյն Սահակայ» անվաւերական գրութեան՝ որ Ս.
Կուսի փոխման վաղնջական աւանդութեան վրայ խմբագրողը
աւելցուցած է Բարթողիմէոս առաքելոյն շնորհուած Ս. Կուսի
պատկերին պարագան:

2. Ս. Կուսի Գերեզմանին բիւզանդական եկեղեցին Երուսաղէմի մէջ.

Բիւզանդիոյ Եւրիսեան պատմութիւնը(*) շատ զրոյցներ կը
պարունակէ այս եկեղեցիին շինութեան մասին, զրոյցներ՝ զոր
Ը. դարուն Յովհաննէս Դամասկացին մէջ կը բերէ, և պատրիարք
Յորնաղի կ'ընծայէ մեծագոյն դեր մը այս եկեղեցւոյ հիմնարկու-
թեան մասին: Յորնաղ յենյով վաղեմի աւանդութիւններուն՝ կը
պատասխանէ Մարկիանոս կոյսեր բուռն փափաքին՝ որով կ'ու-
զէր Երուսաղէմէն Պոլիս փոխադրել Ս. Կուսին մարմինը և թա-
ղել իր շինած եկեղեցիին մէջ: Յորնաղի դէմքը ծանօթ է եկե-
ղեցական պատմութեան մէջ. իր ժամանակակիցներէն շատերը
հակառակ էին իր դաւանաբանական սկզբունքներուն զոր ար-
տայայտած էր Քաղկեդոնի ժողովին մէջ. նոյն իսկ գահազուրկ
ըրին զինքը և հալածեցին: Յորնաղ չի կրնար հիմնադիրը նկատ-
ուիլ Գեթսեմանի Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցիին: Որոշ է թէ
մինչև Ե. դարու կիսուն Ս. Կուսի Գերեզմանին վրայ եկեղեցի
չէր շինուած և Օգոստոս 15ի առնին յիշատակութիւնը գոյութիւն
չունէր: Վրացերէն սաղիմական Ծիսարան-Տօնացոյցը որոշ կեր-

(*) Գործ Ե. դարու, հեղինակն է, քանի մը քննիչներու համաձայն,
Կիւրեղ Սկիւթնապոլսեցին (Տե'ս Meistermann, Nouveau Guide de Terre-
Sainte, էջ 159).